ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

GROUP OF PUBLIC MONITORS IMPLEMENTING SUPERVISION
OVER THE CRIMINAL-EXECUTIVE INSTITUTIONS AND BODIES
OF THE MINISTRY OF JUSTICE OF RA

N 10-21
18.09.2010թ.

ՀՀ Արդարադատության նախարար
պարոն Գ. Դանիելյանին

Հրատապ հաշվետվություն

Հասարակական դիտորդների խմբի անդամներ Միքայել Արամյանը և Արման Դանիելյանը 17.09.2010թ. ժամը 21:45–ի սահմաններում այցելել են «Կոշ» ՔԿՀ և փորձել մուտք գործել հիմնարկ համաձայն Արդարադատության նախարարի 2005թ. նոյեմբերի 18–ի թիվ ՔՀ-66-Ն հրամանով հաստատված հասարակական դիտորդների խմբի կարգի 11 կետի պահանջների (11. Խմբի անդամները իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ)։ Այդուամենայնիվ Պատասխանատու հերթապահի ժամանակավոր պաշտոնակատար Արարատ Մարտիրոսյանը Խմբի անդամներին թույլ չտվեց մուտք գործել հիմնարկ, խնդրելով սպասել, մինչև նա հեռախոսով հիմնարկի պետից համապատասխան թույլտվություն ստանա։ Մեկ ժամ սպասելուց հետո Ա. Մարտիրոսյանը հայտնեց, որ հիմնարկի պետի հետ կապվել չի հաջողվում և այդ պատճառով նա չի կարող թույլ տալ Խմբի անդանների մուտքը հիմնարկ։ Մեր կողմից Պատասխանատու հերթապահի ժամանակավոր պաշտոնակատարին ներկայացվել են Խմբի կարգի դրույթները և նա զգուշացվել է, որ խախտում է օրենսդրությունը, սակայն նա իր որոշումը չփոխեց։ Ավելին, մերժվել է նաև մեր խնդրանքը, մեր ներկայությամբ փորձել կապվել հիմնարկի պետի հետ կամ նրա տեղակալներից մեկի հետ, ինչը որոշակի կասկածներ է առաջացնում։

Հասարակական դիտորդների խումբը գտնում է, որ «Կոշ» ՔԿՀ աշխատակիցները խախտել են Արդարադատության նախարարի 2005թ. նոյեմբերի 18–ի թիվ ՔՀ-66-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողության իրականացման կարգը», ինչով խոչընդոտել են Խմբի աշխատանքները։

Խնդրում եմ անցկացնել համապատասխան միջոցառումներ միջադեպի բոլոր մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար։

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am

Հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով Հասարակական դիտորդների խումբը առաջարկում է համապատասխան միջոցառումներ իրականացնել ՔԿՀ–ների աշխատակիցների օրենսդրության իմացությունը և հիմնարկների կառավարումը բարելավելու ուղղությամբ։

Հարգանքով,

Արման Դանիելյան
ՀՀ ԱՆ ՔԿՀ հասարակական
դիտորդների խմբի նախագահ

ՀՀ Երևան 0025, Այգեստան 11փ, տուն 43 Aygestan 11th str. 43 build, Yerevan 0025, RA
Tel / fax: + (37410) 55 96 34, e-mail: pmg.armenia@hra.am